ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 06/23

02.10.2023թ. ք. Երևան

Արուսյակ Հարությունի Ալեքսանյանի անհատական դիմումի հիման վրա՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության շրջանակներում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 121-րդ հոդվածի 1-ին մասի և 316-րդ հոդվածի 1-ին մասի ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի առնչությամբ

1. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԵՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2022թ. հոկտեմբերի 3-ին, ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում, ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ ու 5-րդ կետերով, 482-րդ հոդվածի 1-ին մասով և 46-441-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ ու 5-րդ կետերով նախաձեռնվել է թիվ 58236222 քրեական վարույթը:

2022թ. հոկտեմբերի 17-ին ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ են ներկայացվել միջնորդություններ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արուսյակ Ալեքսանյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին:

2022թ. հոկտեմբերի 17-ին ՀՀ բարձրագույն դատական խորհուրդը կայացրել է որոշումներ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արուսյակ Ալեքսանյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և ազատությունից զրկելու համաձայնություն տալու մասին:

2022թ. հոկտեմբերի 17-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից կայացվել է որոշում՝ թիվ 58236222 քրեական վարույթով Արուսյակ Ալեքսանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ ու 5-րդ կետերով և 482-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդում հարուցելու մասին, նույն օրը Արուսյակ Ալեքսանյանին ներկայացվել է մեղադրանք:

2022թ. հոկտեմբերի 19-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացվել է որոշում՝ քննիչի միջնորդությունը մասնակի բավարարելու մասին, և մեղադրյալ Արուսյակ Ալեքսանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը՝ 2 ամիս ժամկետով: Նույն

որոշմամբ կալանքի ժամկետի մեջ հաշվակցվել է ձերբկալված լինելու բերումով մեղադրյալի անազատության մեջ գտնված լինելու մեկօրյա ժամկետը:

2022թ. դեկտեմբերի 16-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացվել է որոշում՝ մեղադրյալի կալանքի ժամկետը 1 ամիս ժամկետով՝ մինչև 2023թ. հունվարի 18-ը երկարաձգելու մասին:

2022թ. դեկտեմբերի 26-ին կայացվել է որոշում մեղադրյալներ Արուսյակ Ալեքսանյանի, Էրիկ Ալեքսանյանի և Թամարա Պետրոսյանի մասը թիվ 58236222 քրեական վարույթից անջատելու մասին, անջատված վարույթին շնորհվել է 58248222 համարը:

2023թ. հունվարի 3-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից կայացվել է որոշում մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին, և նույն օրը մեղադրական եզրակացությունը թիվ 58248222 քրեական վարույթի նյութերի հետ ուղարկել է ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

2023թ. հունվարի 18-ի դատական նիստի սկզբում ՀՀ հակակոռուպցիոն դատարանն արձանագրել է, որ մեղադրյալ Արուսյակ Ալեքսանյանի նկատմամբ կիրառված և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022թ. դեկտեմբերի 16-ի որոշմամբ երկարաձգված կալանքի ժամկետը լրացել է: Չնայած դրան հակակոռուպցիոն դատարանը շարունակել է հանրային մեղադրողի կողմից նախորդ դատական նիստերից մեկում միջնորդված մեդադրյալի կալանքի ժամկետի երկարացման հարցի քննարկումը: Դատարանի 2023թ. հունվարի 18-ի որոշմամբ մեղադրյալի նկատմամբ կրկին որպես խափանման միջոց է կիրառել կալանքը 3 ամիս ժամկետով:

2023թ. հունվարի 30-ին մեղադրյալի պաշտպանի կողմից ներկայացվել է հատուկ վերանայման վերաքննիչ բողոք:

2023թ. փետրվարի 23-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից կայացվել է որոշում ՀՀ հակակոռուպցիոն դատարանի 2023թ. հունվարի 18-ի որոշման դեմ պաշտպանի հատուկ վերանայման բողոքը մերժելու մասին:

2023թ. ապրիլի 20-ին պաշտպանի կողմից ներկայացվել է հատուկ վերանայման վճռաբեկ բողոք:

2023թ. ապրիլի 26-ին ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացվել է որոշում՝ պաշտպանի հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին:

2. ԴԻՄՈՒՄՈՎ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴՐՈՒՅԹԸ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ իրավասու անձը մեղադրյալին ազատում է կալանքից, եթե լրացել է դատարանի կողմից սահմանված կալանքի ժամկետը, և չի ստացվել այն երկարաձգելու մասին դատարանի որոշումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կալանքից ազատված անձը չի կարող կրկին կալանավորվել նույն մեղադրանքով, եթե չեն հայտնաբերվել նոր էական հանգամանքներ, որոնք

վարույթն իրականացնող մարմնին հայտնի չէին մեղադրյալին կալանքից ազատելու պահին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախնական դատալսումների ընթացքում դատարանը քննարկման առարկա է դարձնում մինչդատական վարույթում մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցը վերացնելու, փոխելու, դրա ժամկետը երկարաձգելու, իսկ եթե խափանման միջոց կիրառված չի եղել՝ այն կիրառելու հարցը:

3. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 120-րդ հոդվածի համաձայն՝

1. Իրավասու անձը մեղադրյալին ազատում է կալանքից, եթե՝

1) վերացել է անձին կալանքի տակ պահելու հիմքը կամ անհրաժեշտությունը.

2) մեղադրյալի նկատմամբ դադարեցվել է քրեական հետապնդումը.

3) մեղադրյալի նկատմամբ կայացվել է արդարացման վերդիկտ.

4) դատարանը մեղադրյալի նկատմամբ նշանակել է ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ.

5) լրացել է դատարանի կողմից սահմանված կալանքի ժամկետը, և չի ստացվել այն երկարաձգելու մասին դատարանի որոշումը.

6) լրացել է անձին կալանքի տակ պահելու՝ սույն օրենսգրքով սահմանված առավելագույն ժամկետը.

7) սույն օրենսգրքով սահմանված կարգով կալանքը որպես խափանման միջոց փոխվել կամ վերացվել է:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերով նախատեսված դեպքերում մեղադրյալին դատարանը կալանքից ազատում է անմիջապես դատական նիստի դահլիճում:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 5-7-րդ կետերով նախատեսված դեպքերում կալանքի տակ պահելու վայրի վարչակազմի ղեկավարը մեղադրյալին անմիջապես ազատում է կալանքից:

Օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կալանքից ազատված անձը չի կարող կրկին կալանավորվել նույն մեղադրանքով, եթե չեն հայտնաբերվել նոր էական հանգամանքներ, որոնք վարույթն իրականացնող մարմնին հայտնի չէին մեղադրյալին կալանքից ազատելու պահին:

Մեջբերված իրավանորմերի և դիմումի վերլուծությունից պարզ է դառնում, որ քննարկվող հարցի համատեքստում կարևորություն է ձեռք բերում կալանքի ժամկետների հաշվարկման կանոնները: Այս հարցին անդրադարձել են և՛ ՀՀ հակակոռուպցիոն դատարանը, և՛ վերաքննիչ դատարանը՝ կալանքի ժամկետի հաշվարկը կատարելով միմյանցից տարբերվող կանոններով: Մի դեպքում այն հաշվարկվել է ժամերով՝ հիմք ընդունելով անձին փաստացի արգելանքի վերցնելու պահը, մեկ այլ դեպքում՝ օրերով, կալանքի ավարտի պահ ֆիքսելով օրվա ավարտը՝ 24:00-ն: Այս առումով գտնում ենք, որ դատարանների կողմից կալանքի ժամկետների տարաբնույթ հաշվարկը խնդիր է քրեադատավարական օրենքի նորմերի միատեսակ կիրառման և օրենքի որոշակիության ապահովման տեսանկյունից: Ավելին, այլ քրեական գործերի պրակտիկ ուսումնասիրությունները ևս ցույց են տալիս, որ դրանցում

միասնականություն չկա կալանքի ժամկետների հետ կապված և իրավակիրառ պրակտիկայում այն **առավելապես** հաշվարկվում և անձը կալանքից ազատվում է ըստ ժամերի հաշվարկի:

Վերադառնալով Օրենսգրքի 120-րդ հոդվածի կարգավորումներին՝ նշենք, որ դրա 1-ին մասի 5-րդ կետը սահմանում է այն դեպքը, երբ լրացել է դատարանի կողմից սահմանված կալանքի ժամկետը, և չի ստացվել այն երկարաձգելու մասին դատարանի որոշումը: Որպես որոշման ստացող և անձին կալանքից ազատող ըստ նույն հոդվածի ներկայացվում է կալանքի տակ պահելու վայրի վարչակազմի ղեկավարը:

Ինչ վերաբերում է քննարկվող դեպքին, ապա կալանքի ժամկետը ըստ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի լրացել է 2023թ. հունվարի 18-ի ժամը 12:15, սակայն դատարանը քննել է հանրային մեղադրողի կողմից ներկայացված կալանքի ժամկետը երկարացնելու միջնորդությունը և բավարարել այն: Դիմումի փաստական հանգամանքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանրային մեղադրողը և դատարանը կարծես անգործություն չեն ցուցաբերել: Կալանքի ժամկետի երկարարացման համար ներկայացված միջնորդությունը դատարանը քննել է սկսած հունվարի 16-ից, սակայն ընթացակարգային տեսանկյունից չի ավարտել հարցի քննարկումը մինչև կալանքի ժամկետի ավարտը՝ հունվարի 18-ի ժամը 12:15-ը: Նման պարագայում անորոշ է արդյոք անձը ձեռք է բերել կալանքից ազատվածի կարգավիճակ:

Ինչ վերաբերում է վերաքննիչ դատարանի դիրքորոշմանը կալանքի ժամկետի երկարաձգման միջնորդության քննության վերաբերյալ, ապա վերջինիս մեկնաբանությունը միտված է եղել ստեղծված իրավիճակում հնարավոր լուծման հայտնաբերմանը և խնդիրը փակուղի չտանելուն: Վերաքննիչ դատարանը մասնավորապես նել է, որ հարցի քննության ընթացքում ինչ-ինչ պատճառներով հնարավոր են ձգձգումներ, որոնք օբյեկտիվորեն հարցը քննող դատարանին կզրկեն կալանքի երկարաձգման համար ներկայացված միջնորդությունը քննել և լուծել մինչև սահմանված ժամկետի ավարտը: Մյուս կողմից հարց է առաջանում (թեպետ ըստ վերաքննիչ դատարանի դա այս դեպքում տեղի չի ունեցել) ինչ մոտեցում կցուցաբերեին դատարանները, եթե հարցի քննարկումն էլ ավելի ձգվեր և օրերով հաշվելու կանոնի կիրառման պայմաններում լրանար կալանքի ժամկետը:

Անդրադառնալով ժամկետների հաշվարկին՝ նշենք, որ չենք կիսում վերաքննիչ դատարանի դիրքորոշումն առ այն, որ անձի հիմնարար իրավունքի սահմանափակման համատեքստում պետք է կիրառելի լինեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածով սահմանված ժամկետների հաշվարկին վերաբերող նորմերը՝ նկատի ունենալով իրավունքի գերակայության սկզբունքը: Այս առումով նշենք, որ ՀՀ սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

Սահմանադրության նույն հոդվածի համաձայն՝ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

ՀՀ սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով:

ՀՀ սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն

դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Անձի ազատության իրավունքի համատեքստում իրավական որոշակիության սկզբունքին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Ըստ ՄԻԵԴ-ի՝ երբ խնդիրն առնչվում է ազատությունից զրկելուն, հատկապես կարևոր է պահպանել իրավական որոշակիության ընդհանուր սկզբունքը: Ուստի, խիստ կարևոր է, որպեսզի ազատությունից զրկելու պայմանները հստակորեն սահմանված լինեն ներպետական օրենսդրության մեջ, ինչպես նաև անհրաժեշտ է, որ օրենքի կիրառության շրջանակը լինի կանխատեսելի (*Khlaifia and Others v. Italy* [GC], § 92):

Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է ոչ միայն ներպետական օրենսդրության առնչությամբ, այլև «օրենքի որակին» վերաբերող պահանջներ, ինչը նշանակում է, որ բոլոր այն դեպքերում, երբ ազգային օրենսդրությամբ թույլատրվում է ազատությունից զրկել, ապա թույլատրող օրենսդրությունը պետք է բավարար չափով հասանելի, ճշգրիտ եւ կիրառության առումով կանխատեսելի լինի: «Օրենքի որակի» այս գնահատման համար էական գոր- ծոնները, որոնք որոշ դեպքերում անվանվում են «կամայականության դեմ երաշխիքներ», ներառում են կալանավորելու որոշումը կայացնելու կամ կալանքի ժամկետը երկարացնելու կամ կալանքի ժամկետ սահմանելու համար հստակ իրավական նորմերի գոյությունը, ինչպես նաև արդյունավետ միջոցի գոյությունը, որով գանգատաբերը կարող է վիճարկել իր կալանքը երկարացնելու «օրինականությունը» և «տևողությունը» (*J.N. v. the United Kingdom,* § 77):

Օրենսգրքի 285-րդ հոդվածի 6-8-րդ մասերի համաձայն. «6. Կալանքի կամ տնային կալանքի ժամկետը երկարաձգելու միջնորդությունը պետք է դատարան ներկայացվի համապատասխան խափանման միջոցի կիրառման ժամկետի ավարտից ոչ ուշ, քան հինգ օր առաջ:

7. Խափանման միջոց կիրառելու միջնորդությունն ստանալուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ ժամվա ընթացքում, իսկ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու միջնորդությունն ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան հաջորդ օրը, դատարանը կայացնում է համապատասխան վարույթ հարուցելու կամ վարույթի հարուցումը մերժելու մասին որոշում:

8. Վարույթ հարուցելու մասին որոշման մեջ նշվում են դատական նիստի անցկացման վայրը, տարին, ամիսը, օրը, ժամը: Դատական նիստը նշանակվում է հնարավոր ամենակարճ ժամկետում: Դատական նիստի ժամանակը որոշելիս հաշվի է առնվում միջնորդությանը և կից նյութերին ծանոթանալու և դիրքորոշում ձևավորելու համար պաշտպանության կողմին ողջամտորեն անհրաժեշտ ժամանակը: Վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելուց հետո միջնորդության և կից նյութերի մեկ օրինակն անհապաղ հանձնվում է մեղադրյալին:»:

Սրան զուգահեռ նշենք, որ 1998 թվականի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումների համաձայն՝ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտության դեպքում քննիչը, դատախազը, ոչ ուշ, քան կալանքի տակ պահելու ժամկետը լրանալուց 10 օր առաջ, պետք է դատարան ներկայացնեն պատճառաբանված միջնորդություն: Դատարանը, համաձայնվելով կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտությանը, ոչ ուշ, քան դատարանի կալանքի տակ պահելու որոշած ժամկետը լրանալուց 5 օր առաջ, համապատասխան որոշում է կայացնում (139-րդ հոդվածի 1-ին մաս):

Համադրելով գործող և նախկին քրեական դատավարության օրենսգրքերի կարգավորումները՝ պարզ է դառնում, որ նախկին օրենսգրքի նորմերը որոշակիության տեսանկյունից առավել ընդունելի են այն հաշվով, որ կալանքի ժամկետը լրանալուց 5 օր

առաջ դատարանին պարտավորեցնում էին կայացնելու համապատասխան որոշում: Գործող օրենսգրքի պարագայում սահմանվում է կալանքի ժամկետը լրանալուց առնվազն 5 օր առաջ ներկայացնել դրա ժամկետը երկարաձգելու միջնորդություն: Դա այն ժամանակահատվածն է, որի ընթացքում դատարանը պետք է ներկայացված միջնորդության վերաբերյալ որոշում կայացնի: Այս կարգավորման թերությունը թերևս նրանում է, որ այն ռիսկեր է պարունակում այն հաշվով, որ սահմանված միջնորդության քննությունը և համապատասխան որոշման կայացումը երբեմն ժամանակային առումով գերազանցում են կալանքի առավելագույն ժամկետը: Իսկ նման պարագայում էլ վեճ է առաջանում կալանքի տակ գտնված անձի կարգավիճակի, վերջինիս կալանքի ժամկետի երկարացման օրինականության, կիրառվող հիմքերի և այլնի վերաբերյալ:

Ինչ վերաբերում է Օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասին, ապա այն համակարգային կապի մեջ է գտնվելով Օրենսգրքի 120-րդ հոդվածի կարգավորումների հետ՝ ածանցյալ է դրանցից: Դիմումի փաստական հանգամանքների համատեքստում Օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի առնչությամբ ձևավորված անորոշության պայմաններում Օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասի կիրառելիությունը դառնում է վիճելի:

Օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումների տեսանկյունից գտնում ենք, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի 2023 թվականի հունվարի 18-ի որոշումը խնդրահարույց է, այն հաշվով, որ Օրենսգիրքը դատարանին լիազորում է նախնական դատալսումների ընթացքում քննարկման առարկա դարձնել մինչդատական վարույթում մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցը վերացնելու, փոխելու, դրա ժամկետը երկարաձգելու, **իսկ եթե խափանման միջոց կիրառված չի եղել՝ այն կիրառելու հարցը**: Այս առումով ՀՀ հակակոռուպցիոն դատարանը, քննության է առել հանրային մեղադրողի կողմից ներկայացված մեղադրյալի **կալանքի ժամկետը երկարաձգելու** միջնորդությունը: Սակայն դիմումի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դատարանը կայացրել է մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին որոշում: Ի դեպ, վերաքննիչ դատարանը ևս խնդիրը դիտարկել է **կալանքի ժամկետը երկարաձգելու** միջնորդության տիրույթում՝ անտեսելով, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանը կայացրել է մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին որոշում՝ այդ փուլում չունենալով դրա իրավունքը:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության շրջանակներում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 316-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումները ՀՀ սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց են:

Համակարգող՝ ***Ա. Ասատրյան***